



Հրագրողներ հանուն ապագայի

ՀՀ Արմավիրի մարզպետ
Համբարձում Մաթևոսյանին
«Հրագրողներ հանուն ապագայի» ՀԿ
նախագահ Սուրեն Դեհերյանից

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Մաթևոսյան,

Համաձայն 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ տրամադրել մեզ հետաքրքրող տեղեկատվությունը.

1. Արմավիրի մարզի **մինչև 100** աշակերտ և բազմահամակազմ դասարաններ ունեցող դպրոցների ցանկը, դրանցում աշակերտների թիվը, երկկոմպլեկտ, եռակոմպլեկտ, քառակոմպլեկտ և այլ բազմակոմպլեկտ դասարանների թիվը:

2. Արմավիրի մարզի **100 և ավելի** աշակերտ և բազմահամակազմ դասարաններ ունեցող դպրոցների ցանկը, դրանցում աշակերտների թիվը, երկկոմպլեկտ, եռակոմպլեկտ, քառակոմպլեկտ և այլ բազմակոմպլեկտ դասարանների թիվը:

3. Արմավիրի մարզի այն դպրոցների ցանկը, որտեղ կա մասնագետ-ուսուցիչների պակաս (յուրաքանչյուր դպրոցի համար խնդրում ենք առանձին նշել անհրաժեշտ մասնագետներ-ուսուցիչների պակասը):

4. Արմավիրի մարզի այն դպրոցների ցանկը, որոնք այս տարի փակվել են:

Խնդրում եմ սույն հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Խնդրում եմ Ձեր պատասխան-նամակում առցանց աղբյուր հիշատակելու դեպքում տրամադրել ոչ թե համապատասխան գերատեսչության կայքի հիմնական էջը, այլ մեզ հետաքրքրող տվյալների մասին էջը, քանի որ ոչ միշտ է, որ կայքի կառուցվածքը կամ որոնողական համակարգը մատչելի է անհրաժեշտ տեղեկատվությունը որոնելու համար:

Խնդրում եմ ծանուցումը ուղարկել էլեկտրոնային տարբերակով՝ ampopmedia@gmail.com էլիասցեին:

Կանխավ շնորհակալ եմ,
Սուրեն Դեհերյան,
«Հրագրողներ հանուն ապագայի» ՀԿ նախագահ
Ampop.am կայքի գլխավոր խմբագիր
բջջ.՝ 096204567



13/09/2019թ.